ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀԾԿՀ-23/3-ՄԱԾՁԲ

ք. Երևան «08» փետրվար 2023 թ.

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Սաֆարյանի, որը գործում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի և այլ օրենքների հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Մանվել Ջալավյան Ա/Ձ-ն, ի դեմս տնօրեն Մանվել Ջալավյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում **է գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու) օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **400000 (չորս հարյուր հազար)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[22] Ընդ որում տուգանքը

հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 **Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:**

Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում միչև պայմանագիր կնքվելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումն իրականացվում է պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ք. Երևան, Սարյան 22 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011183010 ՀՎՀՀ 02531594 Գլխավոր քարտուղար՝ Ա. Սաֆարյան	«Մանվել Ջալավյան» ԱՁ Գործ.հասցե ք.Երևան Մոսկովյան 25 3/1 ա «Ինեկո բանկ» ՓԲԸ Հ/Հ 2050032155921001 ՀՎՀՀ 82934656 Տնօրեն՝ Մ. Ջալավյան
_____ (ստորագրություն) Կ.Տ.	_____ (ստորագրություն) Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« 08 » փետրվար 2023թ. կնքված
ՀԾԿՀ-23/3-ՄԱԾՁԲ ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը 2023թ
1	50311100/1	Գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ /համաձայն կից ներկայացված ցուցակի/: Սարքավորման տեղափոխումը վերանորոգման և ետ վերադարձը իրականացնում է սպասարկողը:	դրամ	400000	1	ք. Երևան, Սարյան 22	ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 18-րդ ենթակետով սահմանված լիազորված մարմնի կողմից գործարքի հաշվառման օրվանից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 20-ը՝ ըստ պատվիրատուի պահանջի

ՑՈՒՑԱԿ

	Ծառայության անվանումը	Գինը
	Xerox WC 3045 բազմաֆունկցիոնալ սարքի	
1.	Դիագնոստիկա	974
2.	Պրոֆիլակտիկա	3199
3.	Մեխանիկայի նորոգում	3756
4.	Վառարանի նորոգում	4173
5.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	4312
6.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	6120
7.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	6120
8.	Սկաների փոխարինում ներառյալ սկաները	5008
9.	Թմբուկի փոխարինում ներառյալ թմբուկը	15023
10.	Մայրական տպասալի փոխարինում	6955
11.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	5147
12.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	3060
	HP LJ 6p մոդելի լազերային տպիչի	
13.	Դիագնոստիկա	1252
14.	Պրոֆիլակտիկա	2504
15.	Մեխանիկայի նորոգում	2226
16.	Վառարանի նորոգում	2226
17.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	4062
18.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	5008
19.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	2504

20.	Մայրական տպասալի փոխարինում	5008
21.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	3756
22.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	3060
	HP LJ 1320 մոդելի լազերային տպիչի	
23.	Դիագնոստիկա	1669
24.	Պրոֆիլակտիկա	1780
25.	Մեխանիկայի նորոգում	3617
26.	Վառարանի նորոգում	3895
27.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	5008
28.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	7511
29.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	3505
30.	Մայրական տպասալի փոխարինում նորով	10294
31.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	6566
32.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	3617
	HP LJ 2200 մոդելի լազերային տպիչի	
33.	Դիագնոստիկա	1252
34.	Պրոֆիլակտիկա	2226
35.	Մեխանիկայի նորոգում	3060
36.	Վառարանի նորոգում	3895
37.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	5008
38.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	8124
39.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	3116
40.	Մայրական տպասալի փոխարինում նորով	11100
41.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	5008
42.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	3617
	HP LJ 2015 մոդելի լազերային տպիչի	
43.	Դիագնոստիկա	1947
44.	Պրոֆիլակտիկա	3199
45.	Մեխանիկայի նորոգում	5008
46.	Վառարանի նորոգում	4173
47.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	5508
48.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	7511
49.	Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	3005
50.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր,	3617

	մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	
	HP LJ 2055D մոդելի լազերային տպիչի	
51.	Դիագնոստիկա	2226
52.	Պրոֆիլակտիկա	3060
53.	Մեխանիկայի նորոգում	5008
54.	Վառարանի նորոգում	4451
55.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	5508
56.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	7511
57.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	3005
58.	Մայրական տպասալի փոխարինում նորով	10015
59.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	6510
60.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	3617
	HP LJ 3005n մոդելի լազերային տպիչի	
61.	Դիագնոստիկա	1669
62.	Պրոֆիլակտիկա	2782
63.	Մեխանիկայի նորոգում	5008
64.	Վառարանի նորոգում	2782
65.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	6426
66.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	6899
67.	Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	2977
68.	Մայրական տպասալի փոխարինում նորով	8791
69.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	5954
70.	Ցանցային քարտի փոխարինում նորով	5008
71.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	3978
	HP Color LJ 2550 մոդելի լազերային տպիչի	
72.	Դիագնոստիկա	2782
73.	Պրոֆիլակտիկա	6677
74.	Մեխանիկայի նորոգում	3895
75.	Վառարանի նորոգում	5842
76.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	10015
77.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	12018
78.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	3505
79.	Մայրական տպասալի փոխարինում նորով	10015
80.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	6009
81.	Լազերի փոխարինում նորով	11406
	Canon A3 IX6800 մոդելի գունավոր տպիչի	
82.	Դիագնոստիկա	1669
83.	Պրոֆիլակտիկա	3338
84.	Մեխանիկայի նորոգում	2782
85.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	2949
86.	Տպող գլխիկի փոխարինում նորով	43121
87.	Մայրական տպասալի փոխարինում նորով	14745
	Canon i-SENSYS LBP7018C գունավոր լազերային տպիչի	
88.	Դիագնոստիկա	2782
89.	Պրոֆիլակտիկա	7790
90.	Մեխանիկայի նորոգում	5842
91.	Վառարանի նորոգում	5008
92.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	10015

93.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	10015
94.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	4006
95.	Մայրական տպասալի փոխարինում նորով	11017
96.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	9515
97.	Լազերի փոխարինում նորով	10015
	LexMark MX410de բազմաֆունկցիոնալ սարքի	
98.	Դիագնոստիկա	2782
99.	Պրոֆիլակտիկա	5008
100.	Մեխանիկայի նորոգում	5842
101.	Վառարանի նորոգում	6955
102.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	10683
103.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	12297
104.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	5814
105.	Սկաների փոխարինում ներառյալ սկաները	13020
106.	Մայրական տպասալի փոխարինում նորով	14522
107.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	11017
108.	ADF-ի փոխարինում նորով	20031
109.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	12519
	HP M1536dnf MFP բազմաֆունկցիոնալ սարքի	
110.	Դիագնոստիկա	2782
111.	Պրոֆիլակտիկա	4312
112.	Մեխանիկայի նորոգում	5008
113.	Վառարանի նորոգում	5008
114.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	5954
115.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	6899
116.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	3784
117.	Սկաների փոխարինում ներառյալ սկաները	7428
118.	Մայրական տպասալի փոխարինում նորով	15357
119.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	9737
120.	ADF-ի փոխարինում նորով	19196
121.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	3338
	Kyocera Mita KM 4050 պատճենահանող սարքի	
122.	Դիագնոստիկա	5008
123.	Պրոֆիլակտիկա	15023
124.	Մեխանիկայի նորոգում	6677
125.	Վառարանի նորոգում	9014
126.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	24037
127.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	35054
128.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	6009
129.	Մայրական տպասալի փոխարինում նորով	24037
130.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	20031
131.	Տոներ-քարթրիջի լիցքավորում	10015
132.	Ամբողջական թմբուկի փոխարինում նորով (Kyocera Mita KM 4050 drum unit)	135763
	Kyocera KM-2030 պատճենահանող սարքի	
133.	Դիագնոստիկա	2782
134.	Պրոֆիլակտիկա	7511
135.	Մեխանիկայի նորոգում	5842
136.	Վառարանի նորոգում	9459

137.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	20031
138.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	30046
139.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	9014
140.	Տոներ-քարթրիջի լիցքավորում	12018
141.	Ամբողջական թմբուկի փոխարինում նորով (Kyocera Mita KM 2030 drum unit)	129531
	Canon iR 2016j պատճենահանող սարքի	
142.	Դիագնոստիկա	4451
143.	Պրոֆիլակտիկա	7233
144.	Մեխանիկայի նորոգում	4451
145.	Վառարանի նորոգում	5564
146.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	12797
147.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	13632
148.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	5703
149.	Տոներ-քարթրիջի լիցքավորում	5008
150.	Ամբողջական թմբուկի փոխարինում նորով (Canon iR2016 drum unit)	80957
	Canon image FORMULA DR-4010C սարքի	
151.	Դիագնոստիկա	1669
152.	Պրոֆիլակտիկա	3617
153.	Մեխանիկայի նորոգում	5564
154.	Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	4173
155.	Վերանորոգում վնասված պահեստամասերի փոխարինում	8624
	Canon image FORMULA DR-C225II	
156.	Դիագնոստիկա	1669
157.	Պրոֆիլակտիկա	3338
158.	Մեխանիկայի նորոգում	5564
159.	Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	4563
160.	Վերանորոգում վնասված պահեստամասերի փոխարինում	7790
	Panasonic FAX սարքի	
161.	Դիագնոստիկա	1530
162.	Պրոֆիլակտիկա	1947
163.	Մեխանիկայի նորոգում	3338
164.	Սնուցման բլոկի նորոգում	1947
	Epson GT 2500 սկաներ	
165.	Դիագնոստիկա	1808
166.	Պրոֆիլակտիկա	3338
167.	Վերանորոգում վնսված պահեստամասերի փոխարինում	10294
	HP G2710 սկաներ	
168.	Դիագնոստիկա	1808
169.	Պրոֆիլակտիկա	3895
170.	Վերանորոգում վնսված պահեստամասերի փոխարինում	10294
	HP LJ 1200 մոդելի լազերային տպիչի	
171.	Դիագնոստիկա	2504
172.	Պրոֆիլակտիկա	3338
173.	Մեխանիկայի նորոգում	3617
174.	Վառարանի նորոգում	3060
175.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	4674
176.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	5008
177.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	2226
178.	Մայրական տպասալի փոխարինում նորով	5008
179.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	4173
180.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	3338
	HP LJ Pro MFP M227sdn բազմաֆունկցիոնալ սարքի	

181.	Դիագնոստիկա	3060
182.	Պրոֆիլակտիկա	5286
183.	Մեխանիկայի նորոգում	5008
184.	Վառարանի նորոգում	8902
185.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	5981
186.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	8346
187.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	3756
188.	Սկաների փոխարինում ներառյալ սկաները	15301
189.	Մայրական տպասալի փոխարինում նորով	16414
190.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	10015
191.	ADF-ի փոխարինում նորով	15023
192.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	4173
	Canon MF 237W բազմաֆունկցիոնալ սարքի	
193.	Դիագնոստիկա	2504
194.	Պրոֆիլակտիկա	5008
195.	Մեխանիկայի նորոգում	5008
196.	Վառարանի նորոգում	8235
197.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	7011
198.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	9403
199.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	5008
200.	Սկաների փոխարինում ներառյալ սկաները	16024
201.	Մայրական տպասալի փոխարինում նորով	15023
202.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	10015
203.	ADF-ի փոխարինում նորով	16609
204.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	4173
	HP LJ PRO M15A լազերային տպիչի	
205.	Դիագնոստիկա	1947
206.	Պրոֆիլակտիկա	3895
207.	Մեխանիկայի նորոգում	5008
208.	Վառարանի նորոգում	5008
209.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	6593
210.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	7122
211.	Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	4117
212.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	3617
	Canon MF 453dw բազմաֆունկցիոնալ սարքի	
213.	Դիագնոստիկա	3338
214.	Պրոֆիլակտիկա	6399
215.	Մեխանիկայի նորոգում	9181
216.	Վառարանի նորոգում	7511
217.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	11128
218.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	10572
219.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	7511
220.	Սկաների փոխարինում ներառյալ սկաները	15746
221.	Մայրական տպասալի փոխարինում նորով	13632
222.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	11685

223.	ADF-ի փոխարինում նորով	12964
224.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	5286

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողով
ք. Երևան, Սարյան 22
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011183010
ՀՎՀՀ 02531594
Գլխավոր քարտուղար՝ Ա. Սաֆարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Մանվել Ջալավյան» ԱՁ
Գործ. հասցե ք. Երևան Մոսկովյան 25 3/1 տ
«Ինեկո բանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050032155921001
ՀՎՀՀ 82934656
Տնօրեն՝ Մ. Ջալավյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 08 » փետրվար 2023թ. կնքված
ՀԾԿՀ-23/3-ՄԱԾՁԲ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50311100/1	Գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	0	40000	40000	140000	140000	140000	240000	240000	240000	400000	400000	400000	**400000**
Ընդամենը			0	40000	40000	140000	140000	140000	240000	240000	240000	400000	400000	400000	**400000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
*** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողով
Ք. Երևան, Սարյան 22
ՀՀ 900011183010
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02531594
Գլխավոր քարտուղար Ա.Սաֆարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Մանվել Ջալավյան» ԱՁ
Գործ. հասցե՝ ք. Երևան Մոսկովյան 25 3/1 տ
«Ինեկո բանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050032155921001
ՀՎՀՀ 82934656
Տնօրեն՝ Մ. Ջալավյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » 2023թ. կնքված
ՀԾԿՀ-23/3-ՄԱԾՁԲ ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
« » 2023թ. կնքված
ՀԾԿՀ-23/3-ՄԱԾՁԲ ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն